ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ>> ԴԱՇԻՆՔԻ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ,
ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ
ԳԼԱՁՈՐԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ԴԵՄ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻՑ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Մուտքի թիվ 1402
«05» 08 2025 թ.

Հարգելի տիկնայք և պարոնայք.

ՀՀ Վայոց ձորի մարզում վերջին երեսուն տարիների ընթացքում զարգացել են այգեգործությունը, գինեգործությունը, էկոլոգիապես մաքուր սննդի արտադրությունը, անասնապահությունը, տուրիզմը, հյուրանոցային բիզնեսը, հյութերի, ջրերի, տարբեր տեսակի չրերի, խոտաբույսերի թեյերի արտադրությունները և պատմությունը Վայոց ձորին պարգևեց 6000 տարվա Արենի գինու արտադրության մենաշնորհ: Նշված ճյուղերում աշխատում են Վայոց ձորի շուրջ 25000 մարդ:

Վերջին տարիներին ցանկանում են զարգացնել Վայոց ձորում ծանր մետաղային հանքարդյունաբերություն՝ Ամուլ սար, Զառիթափ, Ազատեկ, Գլաձորի բազմամետաղային հանքավարյր, Վարդահովիտ, Արտաբույնք և Մարտիրոս բնակավայրերում: Վերը նշված տարածքներից սկիզբ են առնում Վայոց ձորի խմելու, ոռոգման ջրերը, այդ տարածքները հանդիսանում են ազգաբնակչության սեփականաշնորհված խոտհարքերը, արոտավայրերը:

Մենք գտնում ենք որ այսօրվա տեխնոլոգիաներով շահագործվող մետաղական հանքարդյունաբերությունը անհամատեղելի են մեր ապրելակերպին՝ այգեգործությանը, գինեգործությանը և մնացած զարգացող արդյունաբերական ճյուղերին:

Վայոց ձորի մարզը գտնվում է քարտեզագրված ուրանային հանքավայրերի վրա:

Մեր կարծիքով հանքերի շահագործման դեպքում ջրերը, շրջակա միջավայրը կհարստացվեն ծանր թունավոր մետաղներով, որի առկայության դեպքում բնակչությունը կհեռանա այս տարածքներից, որովհետև 1950-70թթ. շահագործվել է Գլաձորի բազմամետաղային հանքավայրը՝ Ղազմայի, և հետագա շահագործման դեպքում Վայոց ձորի մարզի ամբողջ

բնակչությունը պետք է տարհանվեր այլ բնակատեղիներ, ելնելով ռադիոակտիվ ճառագայթման ֆոնի ավելացմամբ, որովհետև կապարի մեծ քանակությունը՝ որը առաջանում է ուրանի իզոտոպներից, հանքավայրում մեծ քանակություն է կազմում, հանքավայրերը պարունակում են մեծ քանակությամբ մկնդեղ (միշյակ) և ծծումբ, կարող ենք ներկայացնել մասնագետների, նախկին ղեկավարների, գիտնականների տեսաձայնագրություններ:

Խնդրում ենք Եղեգնաձորի խոշորացված համայնքի ավագանուն քննարկել ստեղծված իրավիճակը, ձեռք բերել մասնագետների հիմնավորված եզրակացություններ, ուղերձով դիմել կառավարությանը և Վայոց ձորի խոշորացված համայնքներին, որոշելու և հաստատելու Վայոց ձորի համայնքների զարգացման ուղղվածությունը և հեռանկարները, որովհետև մի խումբ մարդիկ տարիներ շարունակ ստեղծելով նոր կազմակերպություններ ցանկանում են ձեռք բերել հանքերի ուսումնասիրության և շահագործման թույլտվություններ և վերջնական արդյունքով այդ թույլտվությունները վաճառում են արտասահմանյան ընկերություններին, որի պատճառով համայնքների բնակիչները մասնակցում են հանրային լսումների, որը ստեղծել է ազգաբնակչության մոտ դժգոհություններ և պառակտումներ:

ՊԵՏՔ Է ՈՐՈՇԵՆՔ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՏՈՒՐԻԶՄ, ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ, ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ ՄՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ԾԱՆՐ ՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ:

Նման որոշում ընդունելուց հետո ազգաբնակչությունը կարող է տնօրինել իր հետագա ճակատագիրը:

Գլաձորի բազմամետաղային հանքավայրի ուսումնասիրությանը, շահագործմանը դեմ նախաձեռնող խումբ

ղեկավար ____________ Հարություն Գևորգյան հեռ.բջջ.094678570

օգնական ____________ Հայկ Խախանյան հեռ. բջջ.091201349

անդամնե՝ ____________ Արտեմ Արտեմյան 077 023195

____________ Տաթևիկ Զաքարյան 093145885

____________ Արմեն Զաքարյան 093431175

____________ Ավագ Մելքոնյան 093780288

[illegible] 0984599885